

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր ԱՆ ՊԱԳ-ԾՁԲ-018

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ԵՎ ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ
ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԵՎ

ԳՅՈՒՄՐՈՒ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ-Ի

(իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ)

ՄԻՋԵՎ

առողջապահության նախարարությունը,

(այսուհետ՝ Պատվիրատու)

որպես բժշկական օգնության և սպասարկման պետական պատվեր տեղադրող, մի կողմից՝ ի դեմս առողջապահության նախարարության գլխավոր քարտուղարի պարտականություններ կատարող՝ Վահե Հակոբյանի, որը գործում է առողջապահության նախարարության կանոնադրության հիման վրա և

Գյումրու բժշկական կենտրոն ՓԲԸ-ն (լիցենզիա*)

(այսուհետ՝ Կատարող)

ի դեմս տնօրեն՝ Արմեն Իսահակյանի, որը գործում է Գյումրու բժշկական կենտրոն ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա (միայն իրավաբանական անձանց դեպքում), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

I. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն հանձնարարում, իսկ Կատարողը պարտավորվում է առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում ցուցաբերել պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում (այսուհետ՝ Բուժօգնություն) օրենսդրությամբ նախատեսված դեպքերում դրա իրավունքը ունեցող անձանց՝ Պատվիրատուի կողմից թույլատրված Բուժօգնության տեսակների գծով, սույն պայմանագրի հավելված 1-ով սահմանված ծառայություններով և գներով, սույն պայմանագրի հավելված 2-ով սահմանված պայմանագրային գումարի շրջանակներում:

II. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Կատարողն իրավունք ունի.

2.1.1. սույն պայմանագրով սահմանված կարգով ստանալ փոխհատուցում սույն պայմանագրի պայմաններին համապատասխան ծավալով և որակով մատուցված Բուժօգնության համար,

2.1.2. անհրաժեշտության դեպքում հիմնավորել Պատվիրատուին ներկայացված Բուժօգնության վերաբերյալ հաշվետվությունների արժանահավատությունը՝ լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու միջոցով,

2.1.3. հերթագրման ոչ ենթակա դեպքերում Բուժօգնության պայմանագրային ծավալների ամսական համամասնությունների գերակատարման հետևանքով հաշվետու ժամանակահատվածում չներկայացված հաշվետվությունները ներկայացնել Պատվիրատուին փոխհատուցման՝ սույն պայմանագրով հաստատված պայմանագրային գումարի շրջանակներում,

2.1.4. ներկա գտնվել Պատվիրատուի կողմից բժշկական կազմակերպությունում իրականացվող դիտարկումներին, մշտադիտարկումներին, ուսումնասիրություններին, փորձագիտական գործունեությանը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով բողոքարկել Պատվիրատուի գործողությունները,

2.1.5. օգտվել ոլորտը կարգավորող իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներից:

2.2. Կատարողը պարտավոր է.

2.2.1. Բուժօգնությունն իրականացնել ոլորտը կարգավորող օրենքներին, որոշումներին և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի (այսուհետ՝ Նախարար) անհատական և նորմատիվ հրամաններին համապատասխան,

2.2.2. յուրաքանչյուր ամսվա համար մինչև այդ ամսվան հաջորդող ամսվա 2-րդ աշխատանքային օրվա աշխատանքային ժամի ավարտը (դեկտեմբեր ամսվա համար մինչև դեկտեմբերի 15-ին հաջորդող 2-րդ աշխատանքային օրվա աշխատանքային ժամի ավարտը) էլեկտրանային առողջապահության համակարգի միջոցով ամփոփել և ներկայացնել Բուժօգնության շրջանակներում կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններ (նախարարի 24.01.2011թ-ի N 63-Ա հրամանով հաստատված «Պետական պատվերի շրջանակներում կատարված աշխատանքներն ըստ բյուջետային ծրագրերի և բժշկական ծառայությունների տեսակների» հաշվետվությունը /Ձև N HP-011/ և /Ձև N SC-011/) պայմանագրային գումարի ամսական համամասնությունների ծավալներին համապատասխան՝ սույն պայմանագրի 5-րդ հավելվածով սահմանված չափաքանակների շրջանակներում, հավելված 2-ով նշված ծրագրերին համապատասխան առանձին ընդունման-հանձնման արձանագրություններ և հաշվարկային փաստաթղթեր, ինչպես նաև իր կողմից իրականացվող գործունեության վերաբերյալ նախարարի կողմից և այլ իրավական ակտերով սահմանված հաշվետվություններ, ձևեր և տեղեկանքներ,

* Կ-ԲՕ-001761 տրված 30/11/2012թ-ին:

2.2.3. ապահովել սույն պայմանագրին կից «Ծառայությունների մատուցման պայմանները» (հավելված 3),

2.2.4. Պատվիրատուի կողմից էլ. առողջապահական համակարգի տվյալների փոխանցումն ապահովող ցանցի (data network) ներդրման դեպքում 14 օրյա ժամկետում միանալ տվյալ ցանցին՝ միևնույն ժամանակ ունենալով էլ. առողջապահական համակարգի տվյալների փոխանցման ցանցը սպասարկող մատակարարից տարբերվող այլ մատակարարի կողմից մատուցվող պահուստային կապուղի՝ ապահովելով 10 օգտատիրոջ հաշվով 2 մբ/վ սիմետրիկ ինտերնետ սնուցում,

2.2.5. ապահովել սույն պայմանագրի շրջանակներում իրականացվող Բուժօգնության մասին տեղեկատվության հրապարակայնությունը, այդ թվում՝ բնակչության համար տեսանելի վայրում տեղադրելով համապատասխան տեղեկատվություն Բուժօգնության տրամադրման հետ կապված հարցերի կամ բողոքների ներկայացման կարգի Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման մասին» թիվ 318-Ն որոշմամբ հաստատված բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 1717-Ն որոշմամբ հաստատված բնակչության սոցիալական խմբերի և այն հիվանդությունների ցանկերի, որոնց դեպքում դեղերը հատկացվում են անվճար կամ արտոնյալ պայմաններով, Նախարարի հրամաններով հաստատված «Հիմնական դեղերի ցանկի», հատուկ և դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների ցանկերի և սահմանված արտոնությունների մասին,

2.2.6. պացիենտի հետ կնքել Նախարարի 2011 թվականի փետրվարի 4-ի թիվ 12-Ա և 2011 թվականի փետրվարի 1-ի թիվ 104-Ա հրամաններով հաստատված համավճարային կամ վճարովի հիմունքներով հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման համապատասխան պայմանագիր,

2.2.7. ապահովել պետության կողմից երաշխավորված անվճար Բուժօգնություն ստացող անձանց իրազեկման թերթիկի լրացումը և տրամադրումը պացիենտներին՝ համաձայն Նախարարի 2013 թվականի դեկտեմբերի 18-ի N 3274-Ա հրամանով հաստատված կարգի,

2.2.8. ապահովել գոյացած ֆինանսական միջոցների արդյունավետ և նպատակային օգտագործումը՝ պահպանելով ծախսերի իրականացման հետևյալ առաջնահերթությունները.

2.2.8.1. աշխատավարձ,

2.2.8.2. հարկային պարտավորություններ,

2.2.8.3. դեղերի և բժշկական նշանակության ապրանքների գնում,

2.2.8.4. այլ ծախսեր,

2.2.9. սահմանել աշխատողների աշխատավարձը, այդ թվում՝ ըստ բուժաշխատողների տարբեր կատեգորիաների աշխատավարձի նվազագույն ամսական չափերը, Նախարարի հրամաններով հաստատված՝ աշխատողների աշխատանքի վարձատրության հաշվարկման և վճարման չափորոշիչներին համապատասխան,

2.2.10. ապահովել Պատվիրատուի կողմից սահմանված կարգով և հաստատված ձևերով իրականացվող Բուժօգնության հաշվառումը, գրանցումը, մուտքագրումը էլեկտրոնային առողջապահության համակարգ՝ սահմանված ժամկետներում և տեխնիկական չափանիշներին համապատասխան, ինչպես նաև ապահովել էլեկտրոնային առողջապահության համակարգի սպասարկումը սեփական միջոցներով,

2.2.11. դեպքերի անհատական վարում իրականացնելու նպատակով (case management) Նախարարի կողմից հաստատված ծրագրերի կամ ծառայությունների մասով ապահովել հաճախորդների այցելությունների, բժշկական միջամտությունների, մատուցվող ծառայությունների վերաբերյալ տեղեկատվության մուտքագրումը էլեկտրոնային առողջապահության համակարգ դրանց փաստացի կատարման պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում,

2.2.12. ապահովել առնվազն բժիշկների, միջին բուժանձնակազմի, ինչպես նաև էլեկտրոնային առողջապահության համակարգից օգտվող վարչատնտեսական անձնակազմի նույնականացման քարտերի առկայությունը,

2.2.13. ապահովել հետևյալ տվյալների մուտքագրումը էլեկտրոնային առողջապահության համակարգ՝

2.2.13.1. բժշկական և վարչական անձնակազմի անհատական և կոնտակտային տվյալներ,

2.2.13.2. անձնակազմի պաշտոնների և կառուցվածքի վերաբերյալ տվյալներ,

2.2.13.3. բժշկական անձնակազմի աշխատանքային և ոչ աշխատանքային ժամերի վերաբերյալ տվյալներ,

2.2.13.4. բժշկական կազմակերպությունում առկա բժշկական սարքավորումների վերաբերյալ տվյալներ,

2.2.13.5. բժշկական կազմակերպության տվյալները (այդ թվում՝ անվանում, հեռախոս, հասցե, ՀՎՀՀ, պատասխանատուի վերաբերյալ անհատական տվյալներ և այլն),

2.2.13.6. բժշկական կազմակերպության ղեկավարի անհատական և կոնտակտային տվյալները,

2.2.13.7. պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով մատուցվող բոլոր բժշկական ծառայությունների վերաբերյալ տեղեկատվությունը (այդ թվում՝ նաև առանձին դեպքերով չֆինանսավորվող այցերի մասով)՝ համաձայն էլեկտրոնային առողջապահության համակարգում սահմանված ձևի,

- 2.2.13.8. այլ տվյալներ՝ համաձայն էլեկտրոնային առողջապահության համակարգում պահանջվող տվյալներ,
- 2.2.14. ապահովել սույն պայմանագրի 2.2.13. կետում նշված յուրաքանչյուր տվյալի փոփոխության դեպքում մեկ աշխատանքային օրվա ընթացքում դրանց թարմացումը էլեկտրոնային առողջապահության համակարգում,
- 2.2.15. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իր իրավասության սահմաններում ապահովել էլեկտրոնային առողջապահության համակարգից մշակվող տեղեկատվության գաղտնիությունը,
- 2.2.16. ապահովել ներկայացված հաշվետվությունների տվյալների իսկությունը և արժանահավատությունը, որի համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ինքն է կրում պատասխանատվություն,
- 2.2.17. նախքան դեղերի և բժշկական նշանակության ապրանքների գնման պլանները և հայտարարությունները հրապարակվելը Պատվիրատուի պահանջով դրանք տրամադրել Պատվիրատուին,
- 2.2.18. պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերությունների համար՝ ապահովել ընկերության տարեկան զարգացման ծրագրով սահմանված ցուցանիշների, այդ թվում՝ շահութաբերության ապահովման կատարումը,
- 2.2.19. պայմանագրի գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին անհապաղ գրավոր տեղեկացնել Պատվիրատուին,
- 2.2.20. Պատվիրատուի կողմից դիտարկում, մշտադիտարկում, ուսումնասիրություն, փորձագիտական գնահատում իրականացնելու ամբողջ ընթացքում ապահովել Պատվիրատուին անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի և այլ տեղեկատվության ներկայացումը, ապահովել համապատասխան մասնագետների համար աշխատանքային պայմաններ, օժանդակել աշխատանքները ժամանակին և լիարժեք կատարելու հարցում,
- 2.2.21. ապահովել սույն պայմանագրի գաղտնի հավելված 4-ով սահմանված դրույթների կատարումը, ինչպես նաև այդ դրույթների կատարման հիմքով իրեն հայտնի դարձած, օրենքով պաշտպանվող կամ այլ տեղեկությունների գաղտնիությունը,
- 2.2.22. Պատվիրատուի կողմից սահմանված ընթացակարգով ապահովել բուժաշխատողների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների գնահատմանն ուղղված կազմակերպչական աշխատանքները, ինչպես նաև ընթացք տալ (իրագործել) գնահատման արդյունքների հիման վրա բուժաշխատողների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման և աշխատողների աշխատանքային գործունեության վերաբերյալ Պատվիրատուի ներկայացրած առաջարկություններին,
- 2.2.23. սույն պայմանագրի հավելված 2-ով նախատեսված՝ 200,0 մլն ՀՀ դրամը գերազանցող կազմակերպությունը մինչև օգոստոսի 31-ը ապահովում է անկախ աուդիտորի կողմից հաստատված նախորդ տարվա ֆինանսական հաշվետվություններ և աուդիտորական եզրակացություն: Ընդ որում, սույն պայմանագրի հավելված 2-ով նախատեսված 1000,0 մլն դրամը գերազանցող կազմակերպությունների կողմից ընտրված աուդիտ իրականացնող կազմակերպությունը պետք է բավարարի սույն պայմանագրի հավելված 6-ով նախատեսված պայմաններին,
- 2.2.24. Հայաստանի Հանրապետության 2004 թվականի մարտի 4-ի թիվ 318-Ն որոշմամբ սահմանված կարգով բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց Բուժօգնության համար քվոտաների շրջանակներում տրամադրված ուղեգրերի վերաբերյալ հանձնաժողով ձևավորող բժշկական կազմակերպությունները Նախարարի կողմից սահմանված կարգով ներկայացնել հաշվետվություն առողջապահության նախարարություն,
- 2.2.25. Պատվիրատուի կողմից պահանջ ներկայացնելուց հետո 15-օրյա ժամկետում տրամադրել վերջին 2 տարիների ընթացքում պետական պատվերի պայմանագրի շրջանակներում իր կողմից դուրս գրած դեղատոմսերի պատճենները,
- 2.2.26. կատարել Բուժօգնության ոլորտը կարգավորող իրավական ակտերով սահմանված այլ պարտականություններ:

2.3. Պատվիրատուն իրավունք ունի.

2.3.1. սույն պայմանագրի համաձայն, իրականացնել դիտարկումներ, մշտադիտարկումներ, ուսումնասիրություններ, փորձագիտական գնահատում Կատարողի կողմից Բուժօգնության կատարման ընթացքի, Նախարարի կողմից հաստատված չափորոշիչներով և Պայմանագրով սահմանված ծավալների, որակի, Կատարողի գործունեությունը բնութագրող տեղեկատվության արժանահավատության և ստացված ֆինանսական միջոցների արդյունավետ ու նպատակային օգտագործման ճշտության և իրավական ակտերով սահմանված պահանջների կատարման և պահպանման վերաբերյալ, սահմանել հայտնաբերված թերությունները սեփական միջոցներով վերացնելու ողջամիտ ժամկետ,

2.3.2. հիվանդանոցային Բուժօգնության մասով իրականացնել Բուժօգնության ընթացիկ մշտադիտարկման աշխատանքներ՝ տվյալ բժշկական կազմակերպությանը կցագրված Պատվիրատուի ներկայացուցիչների միջոցով, որոնց իրավասությունների շրջանակը և կցագրումները ըստ բժշկական կազմակերպությունների հաստատվում են Նախարարի հրամանով,

2.3.3. պայմանագրով նախատեսված աշխատանքների ուսումնասիրության, դիտարկման, մշտադիտարկման, փորձագիտական գնահատման արդյունքներով հայտնաբերված թերությունները վկայակոչելու և դրանց հետ կապված պահանջներ ներկայացնելու՝ աշխատանքն ընդունելուց հետո մինչև երեք տարվա ընթացքում: Սույն կետը կիրառվում է նաև կողմերի միջև մինչև սույն պայմանագրի կնքումը ծագած հարաբերությունների նկատմամբ՝ կապված նախորդ երկու տարիների ընթացքում պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների ձեռքբերման հետ,

2.3.4. ամբողջությամբ կամ մասնակի չֆինանսավորել դեպքերի անհատական վարման (case management), մշտադիտարկման, դիտարկման կամ ուսումնասիրություն իրականացնելու ընթացքում հայտնաբերված՝

2.3.4.1. Բուժօգնության այն ծավալները, որոնք ըստ Կատարողի կողմից էլեկտրոնային առողջապահության համակարգի միջոցով ներկայացված հաշվետվությունների՝ պացիենտին մատուցվել են ամբողջությամբ կամ մասնակիորեն ոչ պատշաճ ծավալի և որակի,

2.3.4.2. պացիենտի ախտորոշմանը չհամապատասխանող լաբորատոր-գործիքային հետազոտություններով կամ բուժման պլանով կամ բժշկի կողմից նշանակված դեղերով բժշկական օգնության մատուցման դեպքերը,

2.3.4.3. ոլորտը կարգավորող իրավական ակտերի դրույթների չպահպանման դեպքերում,

2.3.5. առողջության առաջնային պահպանում իրականացնող կազմակերպություններում Նախարարի կողմից սահմանված Բուժօգնության որակի չափանիշները և ցուցանիշները չհապահովելու դեպքում Կատարողի կողմից կատարված փաստացի աշխատանքների ծավալներում իրականացնել նվազեցումներ Նախարարի կողմից սահմանված կարգով,

2.3.6. Կատարողի կողմից սույն պայմանագրով սահմանված միևնույն դրույթը պայմանագրի գործողության ժամկետում կրկնակի խախտելու դեպքում՝

2.3.6.1. կիրառել սույն պայմանագրով նախատեսված տույժեր, տուգանքներ և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության այլ միջոցներ,

2.3.6.2. միակողմանի լուծել պայմանագիրը՝ հաշվի առնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 780-րդ հոդվածը,

2.3.7. այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև սույն պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով Պայմանագիրը լուծվել է:

2.3.8. միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողը էականորեն խախտել է սույն պայմանագրի դրույթները: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

2.3.8.1. մատուցված ծառայությունները չեն համապատասխանում սույն պայմանագրով սահմանված պահանջներին,

2.3.8.2. խախտվել են ծառայությունների մատուցման ժամկետները,

2.3.9. պահանջել պայմանագրով նախատեսված տույժերի^{է7} և տուգանքների վճարում,

2.3.10. պահանջել և 15-օրյա ժամկետում ստանալ Կատարողի կողմից վերջին 2 տարիների ընթացքում պայմանագրի շրջանակներում իր կողմից դուրս գրած դեղատոմսերի պատճենները,

2.3.11. կրել Բուժօգնության ոլորտը կարգավորող իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներ:

2.4. Պատվիրատուն պարտավոր է.

2.4.1. իրավական ակտերով սահմանված ժամկետներում ընդունել և ամփոփել Կատարողի կողմից իրականացված Բուժօգնության վերաբերյալ ներկայացված հաշվետվությունները և ներկայացնել վճարման,

2.4.2. սահմանված կարգով ապահովել ֆինանսավորման համար անհրաժեշտ փաստաթղթերի մուտքագրումը և այլ անհրաժեշտ գործողությունների կատարումը՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 15-ը, իսկ դեկտեմբեր ամսվա առաջին կեսի համար՝ մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը՝ Կատարողի կողմից սույն պայմանագրի 2.2.2. կետով սահմանված ժամկետների պահպանման պայմանով,

2.4.3. կատարողին ցուցաբերել անհրաժեշտ կազմակերպամեթոդական օժանդակություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) պաշտոնական կայք-էջում ստեղծել հատուկ դարան և տեղադրել պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման ոլորտը կարգավորող իրավական ակտերը,

2.4.4. վճարումներ իրականացնելիս՝ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում ապահովել Կատարողի նկատմամբ տույժերի և տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը,

2.4.5. եթե պատվիրատուն պայմանագրով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված, և պայմանագրով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը պատվիրատուն պայմանագրի կողմին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում, պայմանագրի արդյունքը պատվիրատուին հանձնելու փաստն ամրագրվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը (էլեկտրոնային հասցեով հանձնելու դեպքում հիմք է ընդունվում ուղարկման ամսաթիվը),

2.4.6. Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից,

2.4.7. կատարել ոլորտը կարգավորող իրավական ակտերով սահմանված այլ պարտականություններ:

III. ՎԵՐԱՀՍԿՈՒՄ

3.1. Կատարողի կողմից սույն պայմանագրի շրջանակներում մատուցված կամ մատուցվող ծառայությունների որակի և ծավալի համապատասխանության գնահատումը սույն պայմանագրի պահանջներին իրականացվում է՝

3.1.1. ՀՀ օրենսդրությամբ և Նախարարի հրամանով հաստատված ընթացակարգով՝ մշտադիտարկումների, դիտարկումների, ուսումնասիրությունների, դեպքերի անհատական վարման (case management) միջոցով,

3.1.2. Կատարողի կողմից դեղերի և բժշկական նշանակության ապրանքների գնման նպատակով կնքված պայմանագրերի, ինչպես նաև գնման գործընթացների ընտրանքային մշտադիտարկում իրականացնելու միջոցով, այդ թվում՝ Կատարողից այդ գործարքներին առնչվող բոլոր փաստաթղթերը պահանջելով և ստանալով, ինչպես նաև մշտադիտարկման արդյունքներով բացահայտված խնդիրների շտկման նպատակով համապատասխան գործողություններ իրականացնելով՝ նախապես համաձայնեցնելով ՀՀ ֆինանսների նախարարության հետ (վերաբերվում է միայն 50% և ավելի պետական մասնակցությամբ առևտրային և պետական ոչ առևտրային կազմակերպություններին):

IV. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պայմանագրով սահմանվում են տույժեր և տուգանքներ: Տուգանքի չափը չի կարող պակաս լինել պայմանագրի գնի 0,5 տոկոսից, իսկ տույժերի չափը՝ 0,05 տոկոսից: Ընդ որում, տույժը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ, իսկ տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:

4.2. Պարտավորությունների ոչ պատշաճ կատարում է համարվում նաև՝

4.2.1. եթե Կատարողի կողմից էլեկտրոնային առողջապահության համակարգ մուտքարված տվյալներում յուրաքանչյուր ծրագրի մասով հայտնաբերված թերությունների, անճշտությունների կամ ոչ արժանահավատ դեպքերի թիվը ամսական կտրվածքով կազմում է ներկայացված հաշվետվությունների 5 տոկոսը կամ ավելին,

4.2.2. Կատարողի կողմից սույն պայմանագրով նախատեսված Բուժօգնության ծավալները ոչ ամբողջությամբ կամ մասնակի կամ ոչ պատշաճ որակի Բուժօգնության տրամադրումը՝ Պատվիրատուի կողմից Կատարողին սույն պայմանագրի գործողության ընթացքում առնվազն մեկ անգամ գրավոր տեղեկացրել է նախազգուշացնելուց հետո նույն խախտումը կրկնվելու կամ այն չվերացնելու դեպքում,

4.3. սույն պայմանագրով հաշվետվությունների ներկայացման ժամկետները խախտելու դեպքում Կատարողից ուշացման յուրաքանչյուր օրվա համար գանձվում է տույժ՝ հաշվետու ժամանակահատվածում ներկայացման ենթակա կատարողականի արժեքի 0,05%-ի չափով,

4.4. Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 2.4.2. կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով,

4.5. Կատարողը սահմանված կարգով և չափերով պատասխանատվություն է կրում նաև սույն պայմանագրի 3-րդ հավելվածում՝ «Ծառայությունների մատուցման պայմաններում» նշված պարտավորությունների չկատարման համար,

4.6. սույն պայմանագրի շրջանակներում մշտադիտարկումների, դիտարկումների, ուսումնասիրությունների, դեպքերի անհատական վարման միջոցով հայտնաբերված այն խախտումների գումարը, որոնք կատարվել են սույն պայմանագրի գործողության ժամանակահատվածում, Պատվիրատուն պակասեցնում է Կատարողի ընթացիկ տարվա փաստացի աշխատանքների ծավալից, իսկ սույն պայմանագրի գործողության ժամանակահատվածից դուրս հայտնաբերված խախտումների արձանագրված գումարը փոխանցվում է ՀՀ պետական բյուջեի համապատասխան հաշիվներին,

4.7. Պատվիրատուի կողմից հայտնաբերված խախտումների ճշտումը չի ազատում Կատարողին իր պարտավորությունները ոչ պատշաճ կատարելու համար ՀՀ օրենսդրությամբ և սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվությունից,

4.8. տուգանքի և տույժի վճարումը Պատվիրատուին և Կատարողին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները ամբողջությամբ կատարելու կամ խախտումները վերացնելու պարտականությունից,

4.9. սույն պայմանագրի շրջանակում նախատեսված տուգանքները և տույժերը հաշվարկվում և վճարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.10. սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում Պատվիրատուին և Կատարողին իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

V. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

5.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե եղել է անհաղթահարելի ուժի ազդեցություն, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

VI. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

6.1. Սույն պայմանագիրը կարող է լուծվել, եթե կողմերը կամ լուծարվել, կամ վերակազմակերպվել, կամ սնանկ են ճանաչվել՝ հատուցելով կողմերի կատարած ծախսերը,

6.2. Սույն պայմանագիրը կարող է լուծվել 2.3.8. և 5.1 կետերով նախատեսված դեպքերում,

6.3. Սույն պայմանագիրը կարող է միակողմանի լուծվել՝ 7.2 կետում նշված համաձայնագրի կնքումից Կատարողի հրաժարման դեպքում,

6.4. ՀՀ օրենսդրությամբ կամ սույն պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

VII. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 31.12.2019 թվականը: Պայմանագրի պայմանները կիրառվում են 2018թ. դեկտեմբերի 15-ից մինչև պայմանագիր կնքելը, բայց ոչ ուշ, քան 2019թ. հունվարի 31-ը կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում մինչև պայմանագիր կնքվելը Կատարողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարումը իրականացվում է Պայմանագիրը սույն կետի համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

7.2. Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ (պետական պատվերի շրջանակներում իրականացվող բժշկական օգնության տեսակների նորմատիվներում և գներում, Կատարողի պայմանագրային գումարներում Նախարարի համապատասխան հրամաններով իրականացվող փոփոխությունները և լրացումները) կարող են կատարվել համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7.3. Սույն պայմանագրի փոփոխման կամ լուծման դեպքում տվյալ պահին բուժումը դեռ չավարտած պացիենտների բուժման հետագա փոխհատուցումը իրականացնելու նպատակով, Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում պակասեցման ենթակա ծառայության մասով բուժումը շարունակող պացիենտների ցանկը և հիվանդության պատմագրերի համարները:

7.4. Կողմերի միջև վեճերը լուծվում են Կողմերի բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.5. Սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում, արգելվում է կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայությունների ծավալների կամ, ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

7.6. Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.7. Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը: Ընդ որում, արգելվում է միևնույն բյուջետային տարվա ընթացքում նույն ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերման նպատակով նախատեսել ֆինանսական միջոցներ:

7.8. Սույն պայմանագրից ծագած Կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի առանց պարտապան Կողմի (ֆինանսների նախարարության) գրավոր համաձայնության:

7.8.1. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ առաջացնող գնումների դեպքում պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է այդ գործարքի՝ լիազորված մարմնի կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.9. Սույն պայմանագիրը և նրան կից հավելվածները կազմված են հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից, որոնցից մեկը գտնվում է Պատվիրատուի, մյուսը՝ Կատարողի մոտ՝ բացառությամբ գաղտնի հավելված 4-ի:

VIII. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Առողջապահության նախարարություն

ԿԱՏԱՐՈՂ

Գյումրու բժշկական կենտրոն ՓԲԸ

Հասցե Երևան, Կառավարական տուն 3

Հասցե ք. Գյումրի Գարեգին Նժդեհ 3/3

Սպասարկող ԳՆ գործառնական վարչություն
բանկ

Սպասարկող Արարատբանկ ԲԲԸ
բանկ

Բանկային 900011105013

Բանկային 1510019952250100

հաշիվ
ՀՎՀՀ 02507171

հաշիվ
ՀՎՀՀ 05539526

ԱՆ գլխավոր քարտուղարի պարտականություններ
կատարող՝
Վահե Հակոբյան

Տնօրեն՝

Արմեն Իսահակյան

/ստորագրություն/

« 29 » հունվարի 2019 թ

Հեռ: +37460808003

Ֆաքս:

E-mail: info@moh.am

/ստորագրություն/

« 29 » հունվարի 2019 թ

Հեռ: +37493777906

Ֆաքս:

E-mail: gyumrimc@gmail.com

ՑԱՆԿ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ԵՎ ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ և ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԹՈՒՅԼԱՏՐՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԳՆԵՐԻ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐՈՒ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ
(տարածաշրջանի և բժշկական կազմակերպության անվանումը)

Ծառայության կոդը	Բժշկական օգնության և սպասարկման տեսակը և ծառայությունը	Չափման միավորը	Գին	Միավորի օրական գինը (դրամ)
2.1	Ներքին բժշկական (ընդհանուր թերապևտիկ)			
0201000	Ընդհանուր թերապևտիկ	ԴԵՊԲ	107900	
0201001	Ընդհանուր թերապևտիկ ցերեկային ստացիոնարում	ԴԵՊԲ	43160	
0201002	Սրտամկանի սուր ինֆարկտ` ներառյալ ինտենսիվ թերապիա /առանց վերակենդանացման ծառայությունների/	ԴԵՊԲ	107900	
0201003	Ինսուլյո` ներառյալ ինտենսիվ թերապիա /առանց վերակենդանացման ծառայությունների/	ԴԵՊԲ	107900	
0201004	Հիպերտոնիկ կրիզ /մեծ/	ԴԵՊԲ	23500	
0211203	Սրտամկանի սուր ինֆարկտ` ներառյալ III մակարդակի վերակենդանացման ծառայությունները	ԴԵՊԲ	184600	
0211303	Ինսուլյո` ներառյալ III մակարդակի վերակենդանացման ծառայությունները (ընդհ. թերապևտիկ)	ԴԵՊԲ	235800	
2.5	Ընդհանուր վիրաբուժական			
0201005	Սուր միզակապություն /մեծ/	ԴԵՊԲ	23500	
0201006	Երիկամային խիթ /մեծ/	ԴԵՊԲ	23500	
0202000	Ընդհանուր վիրաբուժական /մեծ./	ԴԵՊԲ	107900	
0202010	Փոքր վիրահատական միջամտություններ /մեծ/	ԴԵՊԲ	23500	
0301080	Թարախային վիրաբուժություն (ներառյալ արյան ցանքսով հաստատված սեպսիս) /մեծ/	ԴԵՊԲ	217900	13600
0302004	Վիրաբուժական բաժանմունքներում բժշկական հակացուցումներով չվիրահատված հիվանդների հետազոտությունների փոխհատուցում /մեծ/	ԴԵՊԲ	15000	
0502001	Ընդհանուր վիրաբուժական (երեխա)	ԵՐԵՄԱ	179000	
0709002	Բուժաստատության միջոցներով գնված հակաթույն դեղորայքի փաստացի ծախս	ԴՐԱՄ	120000	
1700000	Վերքի առաջնային վիրաբուժական մշակում և կարում	ԴԵՊԲ	12000	
1700001	Պարոնիխիաներ, ներառած եղունգ, եղունգի հեռացում	ԴԵՊԲ	12000	
1700002	Ֆնեզմոնայի, թարախակոյտի (արսցես) բացում	ԴԵՊԲ	12000	
1700003	Վննդանիների կողմից հասցված վնասվածքների առաջնային վիրաբուժական մշակում (ՀՓ կամ ՀԿ շիճուկների ներարկմամբ)	ԴԵՊԲ	12000	
1700004	Փոքր վերքերի վիրակապություններ առանց կարերի	ԴԵՊԲ	4000	
1700005	Ողնոտեղային պոնկցիա	ԴԵՊԲ	17000	
1700006	Լորեկտոմիա	ԴԵՊԲ	450000	
1700007	Կրծքային փոքր վիրահատություններ` կրծքավանդակի պատի ուտուցքների հեռացում առանց ընդհանուր անզգայացման	ԴԵՊԲ	125000	
1700008	Պլրալ խոռոչի դրենաժիրում	ԴԵՊԲ	70000	
1700009	Պլրալ պոնկցիա	ԴԵՊԲ	25000	
1700010	Վննկտոմիա, թորմբեկտոմիա (թորմբեկտոմիա)	ԴԵՊԲ	240000	
1700011	Վիրահատություններ պերիտոնեոկալիզացիայի վրա, էնդոսկոպիկ վիրաբուժություններ	ԴԵՊԲ	300000	
1700012	Փոքր անոթային վիրահատություններ	ԴԵՊԲ	145000	
1700013	Երկկողմանի վննկտոմիա	ԴԵՊԲ	350000	
1700014	Ապենդեկտոմիա	ԴԵՊԲ	170000	
1700015	Ապենդեկտոմիա լայարասկոպիկ	ԴԵՊԲ	220000	
1700016	Լեղապարկի հեռացում	ԴԵՊԲ	200000	
1700017	Լեղապարկի հեռացում լայարասկոպիկ	ԴԵՊԲ	220000	
1700018	Կյարդի էխիտոկի հեռացում		238000	
1700019	Կյարդի էխիտոկի հեռացում լայարասկոպիկ	ԴԵՊԲ	250000	
1700020	Ծողվածքահատում միակողմանի (առանց ցանցի արժեքի)	ԴԵՊԲ	200000	
1700021	Ծողվածքահատում լայարասկոպիկ միակողմանի (առանց ցանցի արժեքի)	ԴԵՊԲ	240000	
1700022	Վննտրալ մեծ ճողվածք (առանց ցանցի արժեքի)	ԴԵՊԲ	250000	
1700023	Փայծախի հեռացում	ԴԵՊԲ	300000	
1700024	Վիրահատություններ խոլեդոխի վրա	ԴԵՊԲ	382000	
1700025	Գաստրեկտոմիա	ԴԵՊԲ	470000	
1700026	Հետորովանամպային ոչ օրգանային ուտուցքների հեռացում	ԴԵՊԲ	300000	
1700027	Մեծ ճարպոնի հեռացում	ԴԵՊԲ	210000	
1700028	Փոքրածավալ ուտուցքների հեռացում (տեղային անզգայացմամբ)	ԴԵՊԲ	76000	
1700029	Փոքրածավալ ուտուցքների հեռացում (ընդհանուր անզգայացմամբ)	ԴԵՊԲ	120000	
1700030	Վիրահատություններ խոլեդոխի հիվանդության կապակցությամբ	ԴԵՊԲ	300000	
1700031	Վիրահատություններ անանցանելիության դեպքում	ԴԵՊԲ	300000	
1700032	Ախտորոշիչ լայարոտոմիա	ԴԵՊԲ	153000	
1700033	Կարճ ասնձիկ (հատում)	ԴԵՊԲ	102000	
1700034	Սպիական ֆիմոզ (թլպատում)	ԴԵՊԲ	102000	
1700035	Մեատոտոմիա (մեատոտոմիա)	ԴԵՊԲ	102000	
1700036	Թլխի պլաստիկ ֆիմոզի կապակցությամբ	ԴԵՊԲ	178500	
1700037	Հիպոսպադիա դիստալ ձև MAGPI եղանակով	ԴԵՊԲ	178500	
1700038	Ամորձու թաղանթների ջրզորության վիրահատություն	ԴԵՊԲ	170000	
1700039	Սերմնալարի կիստայի հեռացում	ԴԵՊԲ	170000	
1700040	Օրիսեկտոմիա	ԴԵՊԲ	170000	
1700041	Օրիսեկտոմիա երկկողմանի	ԴԵՊԲ	170000	
1700042	Ներքին աճուկային օղիգ վար կրիպտորխիզմի վիրահատություն	ԴԵՊԲ	195500	
1700043	Սերմնալարի երակների լայնացում` բարձր հատում	ԴԵՊԲ	170000	
1700044	Ամորձու սուր հիվանդություններ, ամորձու ոլորում, ամորձու պատվածք, կախոցի ոլորում, սուր օրիտուլիդիդիմիտ և այլ	ԴԵՊԲ	170000	
1700045	Առնանդամի ամպուտացիա	ԴԵՊԲ	195000	
1700046	Երիկամների վնասվածքներ, որոնք պահանջում են վիրահատական միջամտություն	ԴԵՊԲ	450000	
1700047	Միզածորանի ստենոսկլորում	ԴԵՊԲ	59000	
1700048	Ուրեթրոցիստոսկոպիա ախտորոշիչ նպատակով	ԴԵՊԲ	35000	
1700049	Պերիուրան ցիստոստոմիա	ԴԵՊԲ	59000	
1700050	Ներքին թուրքային հանգուցների լիզակիրում	ԴԵՊԲ	153000	

1700051	Պարապրոկտիտի, պրոյնկի էպիթելային խոտակի կտրվածք	Դեղք	119000	
1700052	Անալ ստրիկտուրայի վերացում	Դեղք	119000	
1700053	Թուֆքահատում և/կամ ճաքի հեռացում	Դեղք	160000	
1700054	Պարապրոկտիտի բացազատում աղիքի լուսանցքում	Դեղք	160000	
1700055	Ախտահարված հյուսվածքների հեռացում	Դեղք	160000	
1700056	Ռիզիդ աղիքի օտար մարմնի տրանսանալ հեռացում	Դեղք	153000	
1700057	Պերիանալ կանդիդոմաների հեռացում	Դեղք	153000	
1700058	Պրոյնկի էպիթելային խոտակի հեռացում	Դեղք	160000	
1700059	Միջին տարածվածության ախտահարված հյուսվածքների հեռացում	Դեղք	204000	
1700060	Պոլիպէկտոմիա կոլոնոսկոպի միջոցով	Դեղք	160000	
1700061	Ռեկտոցելի վերացում	Դեղք	204000	
1700062	Իլեո-կոլոտոմիայի ձևավորում	Դեղք	255000	
1700063	Աղիների շրջանցող բերանակցում	Դեղք	255000	
1700064	Կոլոտոմիա	Դեղք	255000	
1700065	Անալորո պարապրոկտիտի բացազատում	Դեղք	255000	
1700066	Տարածված ախտահարված հյուսվածքների հեռացում	Դեղք	255000	
1700067	Խթաբու մասնահատում ստոմայով	Դեղք	306000	
1700068	Շրջանաձև կարող սարքի օգտագործմամբ հաստ աղու վերականգնողական վիրահատություններ Գարոմանի տիպի և Միկովիչի վիրահատություններինց հետո	Դեղք	340000	
1700069	Խթաբու մասնահատում բերանակցմամբ	Դեղք	340000	
1700070	Կոլոպրոկտէկտոմիա, համակցված վիրահատություններ	Դեղք	382000	
1700071	Պոլիպէկտոմիա ռեկտոսկոպի միջոցով	Դեղք	30000	
1700072	Փոքր մետաղական կոնստրուկցիայի հեռացում (բացառությամբ արտաօջախային կոնստրուկցիաների)	Դեղք	100000	
1700073	Մեծ մետաղական կոնստրուկցիայի հեռացում	Դեղք	153000	
1700074	Անրակոսկրի, թիակոսկրի, ծնկոսկրի, նրբոլորի պարզ չբարդացած կտրվածքների վիրահատություններ	Դեղք	180000	
1700075	Ճաճանչոսկրի, ծղիկոսկրի, ոլորի միջային պնեդի պարզ չբարդացած կտրվածքների վիրահատություններ	Դեղք	240000	
1700076	Անրակոսկրի, թիակոսկրի, ծնկոսկրի, նրբոլորի, ճաճանչոսկրի, ծղիկոսկրի, ոլորի միջային պնեդի բարդ (բաց, բեկորավոր, ներհողային համակցված հողախախտով, փափուկ հյուսվածքների վնասումով և այլն) կտրվածքների վիրահատություններ	Դեղք	240000	
1700077	Բազկոսկրի, նախաբազկի ոսկրերի, ոլորի պարզ չբարդացած կտրվածքների վիրահատություններ	Դեղք	260000	
1700078	Բազկոսկրի, նախաբազկի ոսկրերի, ոլորի բարդ (բաց, բեկորավոր, ներհողային համակցված հողախախտով, փափուկ հյուսվածքների վնասումով և այլն) կտրվածքներ	Դեղք	300000	
1700079	Ազդրոսկրի և կրնքի ոսկրերի պարզ չբարդացած կտրվածքների վիրահատություններ	Դեղք	420000	
1700080	Ազդրոսկրի և կրնքի ոսկրերի բարդ (բաց, բեկորավոր, ներհողային համակցված հողախախտով, փափուկ հյուսվածքների վնասումով և այլն) կտրվածքների վիրահատություններ	Դեղք	500000	
1700081	Պոլիտրավմա, համակցված վիրահատություններ	Դեղք	420000	
1700082	Շյուտեր և պլուտակներ մեկ հատվածի համար (մեկ միավոր)	ՄԻԱՎՈՐ	21000	
1700083	Փոքր մետաղական կոնստրուկցիաներ՝ պնեդի հարթակ, նախաբազկի հարթակ, անրակի հարթակ (յուրաքանչյուրի համար)	ՄԻԱՎՈՐ	170000	
1700084	Միջին մետաղական կոնստրուկցիաներ՝ մեծ ոլորի հարթակ, բազկոսկրի ոսկրերի հարթակ (յուրաքանչյուրի համար)	ՄԻԱՎՈՐ	220000	
1700085	Մեծ մետաղական կոնստրուկցիաներ՝ ազդրի հարթակ, բազկի մեխ, սրունքի մեխ, ազդրի մեխ (յուրաքանչյուրի համար)	ՄԻԱՎՈՐ	270000	
1700086	Դաստակի և ոտնաթաթի փոքր հողերի հողախախտերի կոնսերվատիվ բուժում հարողչական կամ ընդհանուր անզգայացմամբ (ամբուլատոր պայմաններում)	Դեղք	40000	
1700087	Ենթահողախախտ (ամբուլատոր պայմաններում)	Դեղք	12000	
1700088	Կտրվածքների գիպային անշարժացում (վերին վերջույթ)	Դեղք	17000	
1700089	Ձեռնաթաթի մատների գիպային անշարժացում	Դեղք	8000	
1700090	Ոտնաթաթի մատների գիպային անշարժացում	Դեղք	12000	
1700091	Կտրվածքների գիպային անշարժացում (ստորին վերջույթ)	Դեղք	21000	
1700092	Ֆիբրեղաապի անշարժացում, առանց ֆիբրեղապի արժեքի	Դեղք	12000	
1700093	Փափուկ հյուսվածքների սալաբլուրների, մկանների կամ ջրերի գերծան և կապակցությամբ կատարվող գիպային անշարժացում	Դեղք	20000	
1700094	Փափուկ հյուսվածքներինց օտար մարմնի հեռացում	Դեղք	12000	
1700095	Բուժական ներհողային պոնկցիա	Դեղք	10000	
1700096	Ատրումէկտոմիա փոքր ծավալ	Դեղք	155000	
1700097	Ատրումէկտոմիա միջին ծավալ	Դեղք	225000	
1700098	Ատրումէկտոմիա մեծ ծավալ	Դեղք	300000	
1700099	Ատրումէկտոմիա ռադիկալ լիմֆոդենեկտոմիայով մեծ ծավալ	Դեղք	400000	
1700100	Արվածքաբանական դեպքերի բուժում մինչև 20 օր տևողությամբ՝ ներառյալ ընդհանուր անզգայացմամբ կատարվող նեկրէկտոմիաները (1 մ/օրվա գինը)	Դեղք	600000	30000
1700101	Արվածքաբանական դեպքերի բուժում 21 օր և ավել տևողությամբ՝ ներառյալ ընդհանուր անզգայացմամբ կատարվող նեկրէկտոմիաները (ընդհանուր գինը)	Դեղք	600000	
1700102	Ակնագնդի բարդ և բարդացած (կոմբինացված, համակցված) վերքերի վիրաբուժական մշակում (բացառապես վնասվածքների ժամանակ)	Դեղք	65000	
2.5.1	Ընդհանուր վիրաբուժական (<< մարզեր)			
0202020	Ուկրների կտրվածքների ոչ վիրահատական բուժում մինչև 15 օր տևողությամբ /մեծ/ՄՊ	Դեղք	64400	4300
0202021	Ուկրների կտրվածքների ոչ վիրահատական բուժում 15 օրից ավել տևողությամբ /մեծ/ ՄՊ	Դեղք	107900	5400
0202022	Ուկրների կտրվածքների վիրահատական բուժում /մեծ/ՄՊ	Դեղք	107900	
0202023	Ուկրների կտրվածքներ, հողախախտեր, գիպի տեղադրում /ոչ վիր./ /մեծ/ՄՊ	Դեղք	12000	
0301146	Օտոլարինգոլոգիական (մեծ) (<< մարզեր)	Դեղք	80600	
0301147	Օտոլարինգոլոգիական ցեր. ստաց./մեծ/ (<< մարզեր)	Դեղք	32240	
0301148	Տոնգիլեկտոմիա, ադենոիդէկտոմիա ընդհանուր անզգայացումով /մեծ/ (<< մարզեր)	Դեղք	70000	
0301149	Տոնգիլեկտոմիա, ադենոիդէկտոմիա տեղային անզգայացումով /մեծ/ (<< մարզեր)	Դեղք	35000	
0361110	Ակնաբուժական (մեծ)	Դեղք	77200	
0361117	Գլաուկոմայի սուր նոպայի բուժում առանց վիրահատական միջամտության (մեծ)	Դեղք	30900	
0361119	Ակնաբուժական փոքր վիրաբուժական միջամտություններ /մեծ/	Դեղք	12300	
0362003	Կատարակտի վիրահատություն ենթադրալ ռադիկալ արժեք՝ անկախ վիրահատության մեթոդից /մեծ/	Դեղք	100000	
0501005	Սուր միգակապություն (<< մարզեր)/երեխա/	Դեղք	39000	
0501006	Երկամային խիթ (<< մարզեր)/երեխա/	Դեղք	39000	
0502000	Ընդհանուր վիրաբուժական (երեխա)(<< մարզեր)	Դեղք	179000	
0502012	Փոքր վիրահատական միջամտություն (<< մարզեր) /երեխա/	Դեղք	39000	
0502014	Ոչ վիրահատական բուժում ընդհանուր վիրաբուժական բաժանմունքում (<< մարզեր) (երեխա)	Դեղք	153400	22000
0502023	Խոշոր հողերի հետադարձադիսկոն հողախախտերի փակ ուղղում ընդհանուր անզգայացմամբ (երեխա)ՄՊ	Դեղք	107900	
0502024	Խոշոր հողերի հետադարձադիսկոն հողախախտերի և ուղեկցող կտրվածքների վիրահատական բուժում (երեխա)ՄՊ	Դեղք	204600	
0502025	Խոշոր ոսկրերի փակ կտրվածքների բուժում ձգման եղանակով, գիպային անշարժացումով՝ ընդհանուր անզգայացմամբ և ռենտգեն հսկողության ներքո (երեխա)ՄՊ	Դեղք	153400	
0502026	Խոշոր ոսկրերի (ինչպես նաև անրակի և ծնկոսկրի) փակ կտրվածքների վիրահատական բուժում բաց եղանակով, գիպային անշարժացումով՝ ընդհանուր անզգայացմամբ և ռենտգեն հսկողության ներքո (երեխա)ՄՊ	Դեղք	153400	
0502027	Խոշոր ոսկրերի փակ կտրվածքների վիրահատական բուժում՝ ընդհանուր անզգայացմամբ և ռենտգեն հսկողության ներքո (շրտերով, ապարատներով և մեխերով) (երեխա)ՄՊ	Դեղք	153400	
0502028	Խոշոր ոսկրերի բաց, բազմաբերոր, բազմաթիվ (2 և ավելի) կտրվածքների վիրահատական բուժում (երեխա)ՄՊ	Դեղք	204600	
0502029	Ողնաշարի և խոշոր ոսկրերի փակ կտրվածքների ոչ վիրահատական բուժում (երեխա) ՄՊ	Դեղք	107900	
0502030	Ուկրների և ողնաշարի կտրվածքների վիրահատական բուժում (երեխա)ՄՊ	Դեղք	204600	
0502048	Ուկրների կտրվածքներ, հողախախտեր, գիպի տեղադրում (ոչ վիրահատական եղանակով)/երեխա/ընդհ. (<< մարզեր)	Դեղք	20000	
0502140	Օտար մարմնի հեռացում՝ տեղային անզգայացմամբ (ընդհանուր վիրաբուժական բաժանմունքներում) (<< մարզեր) /երեխա/	Դեղք	35800	
0601146	Տոնգիլեկտոմիա, ադենոիդէկտոմիա ընդհ. անզգայացումով (<< մարզեր)(երեխա)	Դեղք	97000	

0601147	Տնօցիլէկտումիա, արշնիդէկտումիա տեղ. անգգայացումով (<< մարգեր/երեխա)	ԴԵՊԲ	55000	
0601148	Օտոլարինգոլոգիական (<< մարգեր/երեխա)	ԴԵԱԿ	122600	
0601149	Օտոլարինգոլոգիական ցեր. ստաց. (<< մարգեր/երեխա)	ԴԵՊԲ	49040	
0661085	Խոշոր ոսկրերի (ինչպես նաև անոթային և ծնկոսկերի) փակ կոտրվածքների վիրահատական բուժում բաց եղանակով (երեխա/(<< մարգեր)	ԴԵՊԲ	228700	
0661186	Օտար մարմնի հեռացում վիրահատական միջամտությամբ՝ ընդհանուր անզգայացմամբ /վնասվածք/ (երեխա/(<< մարգեր)	ԴԵՊԲ	228700	
0662042	Փափուկ հյուսվածքների տրավմատիկ վնասվածքների (մաշկ, ենթամաշկ)՝ նրանց ամբողջական խախտմամբ, վիրահատական բուժում տեղային անզգայացմամբ /երեխա/(<< մարգեր)	ԴԵՊԲ	20400	
0662043	Փափուկ հյուսվածքների տրավմատիկ վնասվածքների (մաշկ, ենթամաշկ)՝ նրանց ամբողջական խախտմամբ, վիրահատական բուժում ընդհանուր անզգայացմամբ /երեխա/(<< մարգեր)	ԴԵՊԲ	35800	
0662044	Ներիոդային և արտաքին տրավմատիկ բնույթի արյունահոսությունների վիրահատական բուժում տեղային անզգայացմամբ /երեխա/(<< մարգեր)	ԴԵՊԲ	35800	
0662045	Ներիոդային և արտաքին տրավմատիկ բնույթի արյունահոսությունների վիրահատական բուժում ընդհանուր անզգայացմամբ /երեխա/(<< մարգեր)	ԴԵՊԲ	51000	
0662046	Փոքր ոսկրերի (ծնոնաթաթ, ոտնաթաթ) կոտրվածքների վիրահատական բուժում տեղային անզգայացմամբ /երեխա/(<< մարգեր)	ԴԵՊԲ	35800	
0662047	Փոքր ոսկրերի (ծնոնաթաթ, ոտնաթաթ) կոտրվածքների վիրահատական բուժում ընդհանուր անզգայացմամբ /երեխա/ (<< մարգեր)	ԴԵՊԲ	92100	
1600314	Տրախեոտոմիա (ներառյալ փողոսիկի արժեքը/(<< մարգեր)	ԴԵՊԲ	100000	
1600402	Միզուկի արտաքին բացվածքի կիստաների հեռացում(<< մարգեր)	ԴԵՊԲ	102000	
1600403	Սրածայր կոնդիլոմաների հեռացում(<< մարգեր)	ԴԵՊԲ	102000	
1600416	Զարկերակ - երակային ֆիստուլաների ձևավորում հեմոդիալիզի համար(<< մարգեր)	ԴԵՊԲ	175000	
1600436	Շագանակազերծի աղեկումայի տրանստրոնտրալ հատում՝ անկախ եղանակից(<< մարգեր)	ԴԵՊԲ	255000	
1600450	Բաց աղեկումէկտոմիա(<< մարգեր)	ԴԵՊԲ	450000	
1600600	Աղեկոտոմիա(<< մարգեր)	ԴԵՊԲ	100000	
1600601	Քթի խոռոչի պոլիպի հեռացում (տեղային անզգայացմամբ/(<< մարգեր)	ԴԵՊԲ	85000	
1600602	Վիրահատություններ ջրոնիկական հիպերտրոֆիկ ռեինիտի կապակցությամբ (տեղային անզգայացմամբ/(<< մարգեր)	ԴԵՊԲ	100000	
1600603	Պարատոնզիլյար թարախակոլոի հատում (ընդհանուր անզգայացմամբ/(<< մարգեր)	ԴԵՊԲ	85000	
1600604	Քթի կոտրվածքներ - ռեպոզիցիա (ընդհանուր անզգայացմամբ/(<< մարգեր)	ԴԵՊԲ	85000	
1600605	Տնօցիլէկտումիա (տեղային անզգայացմամբ/(<< մարգեր)	ԴԵՊԲ	115000	
1600606	Տնօցիլէկտումիա (ընդհանուր անզգայացմամբ/(<< մարգեր)	ԴԵՊԲ	153000	
1600608	Վիրահատություններ ջրոնիկական հիպերտրոֆիկ ռեինիտի կապակցությամբ (ընդհանուր անզգայացմամբ/(<< մարգեր)	ԴԵՊԲ	110500	
1600609	Քթի խոռոչի պոլիպների հեռացում (ընդհանուր անզգայացմամբ/(<< մարգեր)	ԴԵՊԲ	130000	
1600611	Աղեկոտոնզիլէկտումիա (տեղային անզգայացմամբ/(<< մարգեր)	ԴԵՊԲ	135000	
1600612	Աղեկոտոնզիլէկտումիա (ընդհանուր անզգայացմամբ/(<< մարգեր)	ԴԵՊԲ	170000	
1600613	Վիրահատություններ կապված քթի միջնապատի ծովածության հետ (ընդհանուր անզգայացմամբ/(<< մարգեր)	ԴԵՊԲ	130000	
1600620	Քթային շնչառության վերականգնման վիրահատություններ(<< մարգեր)	ԴԵՊԲ	123000	
1600631	Քթային արյունահոսությունների վիրահատական բուժում(<< մարգեր)	ԴԵՊԲ	51000	
1600800	Փոքր մետաղական կոնստրուկցիայի հեռացում (բացառությամբ արտաօդային կոնստրուկցիաների) (<< մարգեր)	ԴԵՊԲ	100000	
1600801	Մեծ մետաղական կոնստրուկցիայի հեռացում(<< մարգեր)	ԴԵՊԲ	153000	
1600802	Դաստակի, ոտնաթաթի մեկ ոսկրի (բացի վեզոսկրից և կրունկոսկրից) պարզ չբարդացած կոտրվածքների վիրահատություններ(<< մարգեր)	ԴԵՊԲ	100000	
1600803	Դաստակի, ոտնաթաթի 2 ոսկրերի (բացի վեզոսկրից և կրունկոսկրից) պարզ չբարդացած կոտրվածքների վիրահատություններ(<< մարգեր)	ԴԵՊԲ	130000	
1600804	Դաստակի, ոտնաթաթի 3 և ավելի ոսկրերի (բացի վեզոսկրից և կրունկոսկրից) պարզ չբարդացած կոտրվածքների վիրահատություններ(<< մարգեր)	ԴԵՊԲ	155000	
1600805	Դաստակի, ոտնաթաթի, (բացի վեզոսկրից և կրունկոսկրից) մեկ ոսկրի բարդ (բաց, բեկորավոր, ներիոդային, համակցված հոդախախտով, փափուկ հյուսվածքների վնասումով և այլն) կոտրվածքների վիրահատություններ(<< մարգեր)	ԴԵՊԲ	120000	
1600806	Դաստակի, ոտնաթաթի (բացի վեզոսկրից և կրունկոսկրից) 2 ոսկրերի բարդ (բաց, բեկորավոր, ներիոդային, համակցված հոդախախտով, փափուկ հյուսվածքների վնասումով և այլն) կոտրվածքների վիրահատություններ(<< մարգեր)	ԴԵՊԲ	170000	
1600807	Դաստակի, ոտնաթաթի (բացի վեզոսկրից և կրունկոսկրից) 3 և ավելի ոսկրերի բարդ (բաց, բեկորավոր, ներիոդային, համակցված հոդախախտով, փափուկ հյուսվածքների վնասումով և այլն) կոտրվածքների վիրահատություններ(<< մարգեր)	ԴԵՊԲ	200000	
1600808	Վեզոսկրի, կրունկոսկրի պարզ չբարդացած կոտրվածքներ(<< մարգեր)	ԴԵՊԲ	150000	
1600809	Վեզոսկրի, կրունկոսկրի բարդ (բաց, բեկորավոր, ներիոդային, համակցված հոդախախտով, փափուկ հյուսվածքների վնասումով և այլն) կոտրվածքների վիրահատություններ(<< մարգեր)	ԴԵՊԲ	200000	
1600810	Անոթոսկրի, թիակոսկրի, ծնկոսկրի, նրբորոշի պարզ չբարդացած կոտրվածքների վիրահատություններ(<< մարգեր)	ԴԵՊԲ	180000	
1600817	Փոքր ջերի և համակցությունների վնասումների վիրահատություններ(<< մարգեր)	ԴԵՊԲ	150000	
1600818	Փոքր ջերի և համակցությունների բարդացած վնասումների վիրահատություններ(<< մարգեր)	ԴԵՊԲ	180000	
1600819	Մեծ ջերի և համակցությունների վնասումների վիրահատություններ(<< մարգեր)	ԴԵՊԲ	175000	
1600820	Մեծ ջերի և համակցությունների բարդացած վնասումների վիրահատություններ(<< մարգեր)	ԴԵՊԲ	240000	
1600821	Դաստակի և ոտնաթաթի փոքր հոդերի հոդախախտների վիրահատական ուղղում(<< մարգեր)	ԴԵՊԲ	115000	
1600823	Միջին հոդերի (ոստիոդ, արմկահոդ, նախաբազուկ դաստակային հոդ, ծնկոսկր-ազդրային հոդ, սրունք-թաթային հոդ) հոդախախտի կոնսերվատիվ բուժում (<< մարգեր)անզգայացումով	ԴԵՊԲ	123000	
1600824	Միջին հոդերի (ոստիոդ, արմկահոդ, նախաբազուկ դաստակային հոդ, ծնկոսկր-ազդրային հոդ, սրունք-թաթային հոդ) հոդախախտի վիրահատական ուղղում(<< մարգեր)	ԴԵՊԲ	270000	
1600826	Խոշոր հոդերի (ծնկահոդ և կոնքազդրային հոդ) հոդախախտների կոնսերվատիվ բուժում(<< մարգեր)	ԴԵՊԲ	150000	
1600858	Դաստակի, նախաբազուկ, գարշապարի, նախագարշապարի և միջֆալանգային հոդային ամպուտացիա ընդհանուր անզգայացումով(<< մարգեր)	ԴԵՊԲ	127000	
1600859	Նախաբազկի կամ սրունքի շրջանի ամպուտացիա(<< մարգեր)	ԴԵՊԲ	250000	
1600860	Բազկի կամ ազդրի շրջանի ամպուտացիա(<< մարգեր)	ԴԵՊԲ	330000	
1600861	Կոնք ազդրային հոդի էկզարտիկուլյացիա(<< մարգեր)	ԴԵՊԲ	450000	
1601400	Նյարդավիրաբուժական փոքր ծավալի վիրահատություններ(<< մարգեր)	ԴԵՊԲ	200000	
